ՏԱՎՈՒՇԻ ԵՎ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԵՐԻ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԸ ՆՈՒՅՆՊԵՍ ՄԵԿՕՐՅԱ ՆԱԽԱԶԳՈՒՇԱԿԱՆ ԲՈՂՈՔԻ ԱԿՑԻԱ ԵՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՒՄ

24.01.2018 17:18

ՀՀ փաստաբանների պալատը ստացել է Տավուշի և Արարատի մարզերի փաստաբանների ներկայացուցիչների (համակարգողների) հետևյալ հայտարարությունը՝

«**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

Տավուշի և Արարատի մարզերի փաստաբաններս նույնպես միանում ենք մեր գործընկերների հայտարարությանը և պահանջում ենք ՀՀ դատական օրենսգրքի նախագծից հանել փաստաբաններին տուգանելու իրավակարգավորումը:

Որպես նախազգուշական քայլ, մենք նույնպես մեկ օրյա բողոքի ակցիա ենք իրականացնելու՝ այդ օրը հրաժարվելով Տավուշի և Արարատի մարզերում պետական մարմիններում (այդ թվում՝ դատարաններում, նախաքննության մարմիններում) պաշտպանություն կամ ներկայացուցչություն իրականացնելուց:

Մեր պայքարի շահառուները մեր վստահորդներն են:

Բողոքի ակցիան տեղի կունենա **2018 թվականի հունվարի 26-ին**:

Տավուշի մարզի փաստաբանների ներկայացուցիչ (համակարգող)՝

փաստաբան Արմեն Ադամյան

Արարատի մարզի փաստաբանների ներկայացուցիչ (համակարգող)՝

փաստաբան Լուսինե Պողոսյան»:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })